



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 152

### ԴԱՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎԵՐԱԼԻԱԶՈՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐՎԱԾ ԼԻԱԶՈՐԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ՏՐՎՈՂ ԼԻԱԶՈՐԱԳՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա ներկայացված դիմումը, որով Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը խնդրել է խորհրդատվական բնույթի պարզաբանում տրամադրել վերալիազորման իրավունքով տրված լիազորագրի հիման վրա փաստաբանին տրվող լիազորագրի համար նոտարական վավերացման անհրաժեշտության վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՊԱՐԶԵՑ

1. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր դիմումում, մասնավորապես, նշել է, որ Անուշ Խաչատուրովայի լիազոր ներկայացուցիչ Արմենակ Մալունցը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումով տեղեկացրել է, որ Անուշ Խաչատուրովայի կողմից իրեն վերալիազորման իրավունքով տրված լիազորագրի հիման վրա իր կողմից փաստաբանին հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիրը դատարանի կողմից պատշաճ լիազորագիր չի համարվել՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մասի պատճառաբանությամբ, (...): Ա. Մալունցը նշել է նաև, որ դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ դատարանները մի դեպքում պատշաճ են համարում վերալիազորման իրավունքով տրված

լիազորագրի հիման վրա փաստաբանին հասարակ գրավոր ձևով (առանց նոտարական վավերացման) տրված լիազորագիրը, իսկ մյուս դեպքում՝ հակառակը:

Ա. Մալունցը վկայակոչել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասը՝ հետևություն անելով, որ վարչական և քաղաքացիական գործերով դատական ներկայացուցչության հետ կապված հարցերը, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով տրված լիազորագրի հիման վրա, կարգավորվում են բացառապես ՀՀ վարչական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով և հետևաբար չեն կարող կարգավորվել այլ նորմերով, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 323-րդ հոդվածով:

2. Հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետում նշվածը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ դատարանների նախագահների խորհրդին խնդրել է ուսումնասիրել բարձրացված հարցը և տալ պարզաբանումներ՝ վերալիազորման իրավունքով տրված լիազորագրի հիման վրա փաստաբանին տրվող լիազորագրի համար նոտարական վավերացման անհրաժեշտության վերաբերյալ առաջացած հարցի կապակցությամբ:

3. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացված հարցի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով՝ համապատասխան հարցում է կատարվել քաղաքացիական և վարչական գործեր քննող դատավորներին: ՀՀ դատարաններից ստացված տեղեկատվության ամփոփման արդյունքները վկայել են, որ ՀՀ դատարանների կողմից դատական պրակտիկայում վերալիազորման իրավունքով տրված լիազորագրի հիման վրա փաստաբանին տրվող լիազորագրի ձևի նկատմամբ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում: Մասնավորապես՝ որոշ դատարաններ (դատավորներ) պատշաճ են համարում վերալիազորման կարգով տրված լիազորագրի հիման վրա փաստաբանին հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիրը (ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, Երևան քաղաքի Շենգավիթ, Կենտրոն և Նորք-Մարաշ, Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանների, ՀՀ Շիրակի, Լոռու, Արարատի և Վայոց ձորի, Արագածոտնի մարզերի ընդհանուր իրավասության դատարաններ), իսկ որոշ դատարաններ (դատավորներ)՝ վերալիազորման կարգով տրված լիազորագրի հիման վրա փաստաբանին նոտարական վավերացմամբ տրված լիազորագիրը (ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն, Աջափնյակ և Դավթաշեն, Ավան և Նոր Նորք վարչական շրջանների, ՀՀ Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի, Արագածոտնի մարզերի ընդհանուր իրավասության դատարաններ):

4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացու տված լիազորագիրը վավերացնում է նոտարը կամ օրենքով նման

իրավասություն ունեցող պաշտոնատար անձը: Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և վավերացման ենթակա չէ:»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ֆիզիկական անձին տրված լիազորագիրը վավերացնում է նոտարը կամ հաստատում է օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձը: Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և այն վավերացման կամ հաստատման ենթակա չէ:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Լիազորագիր ստացած անձը պետք է անձամբ կատարի այն գործողությունները, որոնց համար լիազորված է: Նա կարող է դրանց կատարումը վերալիազորել այլ անձի, եթե դրա համար լիազորված է լիազորագրով կամ հանգամանքների բերումով ստիպված է այդ անել լիազորողի շահերի պահպանման համար:»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Վերալիազորման կարգով տրված լիազորագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով, բացառությամբ սույն օրենսգրքի 321 հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքերի:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 323-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Վերալիազորման կարգով տրված լիազորագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցել այն լիազորագրի գործողության ժամկետը, որի հիման վրա դա տրված է:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Լիազորագիր տվող անձը կարող է ցանկացած ժամանակ վերացնել լիազորագիրը կամ վերալիազորումը, (...):»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Լիազորագիրը դադարելու պահից ուժը կորցնում է նաև վերալիազորավորումը:»:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վերալիազորման իրավունքով տրված լիազորագիրը ենթակա է նոտարական վավերացման՝ օրենքով սահմանված կարգով: Վերալիազորման իրավունքով տրված լիազորագիրը նոտարը վավերացնում է հիմնական լիազորագիրը ներկայացնելու դեպքում: Վերալիազորման իրավունքով տրված լիազորագիրը չի կարող ներառել հիմնական լիազորագրով վերապահվածից ավելի իրավունքներ: Վերալիազորման իրավունքով տրված լիազորագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցել հիմնական լիազորագրի գործողության ժամկետը:»:

5. Հիմք ընդունելով սույն որոշման 4-րդ կետում նշված իրավադրույթները՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ ներկայացուցչության հետ կապված հարաբերությունների հիմնական կանոնակարգումն իրականացվում է ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 19-րդ գլխով («Ներկայացուցչություն») սահմանված նորմերով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նշված իրավադրույթների համակարգային վերլուծությունը վկայում է, որ ներկայացուցչություն իրականացնելու նպատակով գրավոր լիազորությունը կարող է տրվել *լիազորագրի* և *վերալիազորման կարգով տրված լիազորագրի* ձևով: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով առանձին կանոնակարգված է և՛ լիազորագրի, և՛ վերալիազորման կարգով տրված լիազորագրի ձևը: Մասնավորապես՝ վերալիազորման կարգով տրված լիազորագրի համար սահմանված է պարտադիր նոտարական վավերացման պահանջ՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մաս): Այսինքն՝ վերալիազորման կարգով տրված լիազորագրի նոտարական վավերացման պահանջը չպահպանելու միակ բացառությունը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այն է՝ «աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, հեղինակների ու գյուտարարների վարձատրություն, կենսաթոշակներ, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ, այդ թվում՝ դրամական և ծանրոցային, ստանալու լիազորագիրը կարող է հաստատել նաև այն կազմակերպությունը, որտեղ լիազորագիր ստացողն աշխատում կամ սովորում է, նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը և այն ստացիոնար բուժական հաստատության տնօրինությունը, որտեղ նա գտնվում է բուժման մեջ»: Վերալիազորման կարգով տրված լիազորագրի (այդ թվում՝ փաստաբանին) նոտարական վավերացման պարտադիր պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ նոտարը, լինելով արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ, փաստաթուղթը վավերացնելիս ստուգում է փոխանցվող լիազորությունների ծավալի և ժամկետների համապատասխանությունը հիմնական լիազորագրով սահմանվածին՝ հաստատելով փաստաթղթի օրինականությունը և հավաստելով վերջինիս լիարժեք ապացուցողական ուժը («Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 57-րդ հոդված): Նշվածը դատարանին հնարավորություն է տալիս վերալիազորման կարգով տրված լիազորագիրը ներկայացնելիս չպահանջելու հիմնական լիազորագիրը:

6. Վերոգրյալից բացի, ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ դատական ներկայացուցչության հետ կապված հարաբերությունների կանոնակարգումն իրականացվում է ՀՀ դատավարական համապատասխան օրենսգրքերով սահմանված կարգով: Դատական ներկայացուցչության հետ կապված այն հարցերի կարգավորումը, որոնք նախատեսված չեն ՀՀ դատավարական համապատասխան օրենսգրքերով, իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ ներկայացուցչության համար

սահմանված ընդհանուր դրույթներին համապատասխան: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերով փաստաբանին տրվող լիազորագրի համար սահմանված է հասարակ գրավոր ձևը, մինչդեռ վերալիազորման կարգով փաստաբանին տրվող լիազորագրի համար որևէ կարգավորում նախատեսված չէ: Նշվածը վկայում է այն մասին, որ վերալիազորման կարգով տրված լիազորագրի, այդ թվում՝ փաստաբանին վերալիազորման կարգով տրված լիազորագրի հետ կապված հարաբերությունների կարգավորումը պետք է իրականացվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան:

7. Բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել, մասնավորապես, թիվ ՎԳ/3369/05/14 վարչական գործով 2015թ. սեպտեմբերի 16-ի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ, որով վերադարձվել է փաստաբանի կողմից ստորագրված վճռաբեկ բողոքը, քանի որ գործում առկա է եղել վերալիազորման կարգով փաստաբանին հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիր: Վկայակոչված որոշման շրջանակներում նշվել է. «Սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքը ստորագրել է նաև Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Սաքեյանի, Հասմիկ Վարդանյանի և Գագիկ Ավետիսյանի ներկայացուցիչ Արտակ Ջեյնալյանի կողմից վերալիազորված անձ Արթուր Այվազյանը:

Վարչական գործում առկա է 16.08.2013 թվականին Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Սաքեյանի, Գագիկ Ավետիսյանի կողմից Արտակ Ջեյնալյանին և Աշոտ Վարելջյանին և 08.04.2013 թվականին Հասմիկ Վարդանյանի կողմից Արտակ Ջեյնալյանին տրված և նոտարական կարգով վավերացված լիազորագրեր, որով լիազորված անձին տրվում է նաև վերալիազորման իրավունք:

Գործում առկա է նաև Արտակ Ջեյնալյանի կողմից 30.06.2014 թվականին փաստաբան Արթուր Այվազյանին հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերալիազորման կարգով տրված լիազորագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով, բացառությամբ նույն օրենսգրքի 321-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքերի: Վերալիազորման կարգով տրված լիազորագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցել այն լիազորագրի գործողության ժամկետը, որի հիման վրա դա տրված է:

Տվյալ դեպքում վճռաբեկ բողոքը ստորագրվել է Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Սաքեյանի, Հասմիկ Վարդանյանի և Գագիկ Ավետիսյանի ներկայացուցիչ Արտակ Ջեյնալյանի կողմից վերալիազորված անձ Արթուր Այվազյանի կողմից, սակայն վերալիազորման կարգով Արթուր Այվազյանին տրված վերալիազորագիրը չունի նոտարական վավերացում:

*Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի պահանջներին»:*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը դատական պրակտիկայի ամփոփման հիման վրա

## **ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ Է**

Դատական ներկայացուցչություն իրականացնելու նպատակով փաստաբանին վերալիազորման կարգով տրված լիազորագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով:

**Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ**

**Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

**2017թ. սեպտեմբերի 11  
ք.Երևան**